




Empowered lives.  
Resilient nations.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՇԵՆՔԵՐԻ ՋԵՐՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՐԱԶԱՓԵՐԻ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՉԱՓԱԳՐՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ



ԵՐԵՎԱՆ - 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ՇԵՆՔԵՐԻ ԶԵՐՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐԻ  
ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՉԱՓԱԳՐՈՒՄ**

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ**

**ԵՐԵՎԱՆ-2014**

ՀՏԴ 697(07)

ԳՄԴ 31.3g7

Ք 300 Քարամյան Ա.Կ., տ.գ.թ. / «Շենքերի ջերմատեխնիկական հարաչափերի գործիքային չափագրում» ուսումնամեթոդական ձեռնարկ – Եր.: ՄԱԶԾ, 2013թ., 55 էջ:

Ձեռնարկի նպատակն է ներկայացնել շենքերի պատող կոնստրուկցիաների, շինարարական նյութերի ջերմատեխնիկական հարաչափերը և շենքերի էներգաարդյունավետության հետ առնչվող բնութագրերը չափագրող գործիքներն ու սարքերը, դրանց կիրառման եղանակները:

ISBN 978-99941-2-992-8

© ՄԱԶԾ Հայաստան, 2013

© UNDP Armenia, 2013

## Աշխատանքային խումբը



«Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ

Հիդրավլիկայի, ջերմագազամատակարարման և  
օդափոխության ամբիոն

Քարամյան Ա.Կ., տ.գ.թ., հեղինակ

Զաքարյան Ա.Ն., տ.գ.թ., էներգաարդյունավետության  
լաբորատորիայի ղեկավար

Մարգարյան Ա. Յա., տ.գ.դ., պրոֆ., գրախոս

Խարազյան Ռ.Ս., տ.գ.թ., դոցենտ, մասնագիտական  
խմբագիր



«Շենքերի էներգետիկ արդյունավետության  
թարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագիր

Սեկոյան Տ.Վ., փորձագետ

Զալալյան Վ.Մ., փորձագետ

## Բովանդակություն

|                                                                                                                                            |           |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <b>Ուսումնասիրողական ձեռնարկի ուսուցման ծրագիրը, արդյունքները, հիմնական հասկացությունները .....</b>                                        | <b>3</b>  |
| <b>Ներածություն .....</b>                                                                                                                  | <b>5</b>  |
| <b>1. Ջերմահաղորդականության գործակցի որոշման սարք .....</b>                                                                                | <b>8</b>  |
| Փորձ 1.1 Նյութի ջերմահաղորդականության $\lambda$ գործակցի որոշումը .....                                                                    | 9         |
| <b>2. Արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման «Ս» փաստացի արժեքի չափման սարք .....</b>                                               | <b>11</b> |
| Փորձ 2.1 Արտաքին պատի ջերմափոխանցման չափված և հաշվարկային արժեքների համեմատությունը .....                                                  | 13        |
| <b>3. Ինֆրակարմիր ջերմացույց սարք .....</b>                                                                                                | <b>16</b> |
| Փորձ 3.1 Շենքի ջերմության կորուստների կամ «ջերմային կամուրջների» հայտնաբերումը .....                                                       | 18        |
| Փորձ 3.2 Սովերման արդյունավետության գնահատումը .....                                                                                       | 19        |
| Փորձ 3.3 «Ջով» տանիքի առավելությունների գնահատումը .....                                                                                   | 21        |
| <b>4. Օդերևութաբանական կայան .....</b>                                                                                                     | <b>22</b> |
| Փորձ 4.1 Շենքերի հորիզոնական, ուղղահայաց և թեք մակերևույթներին ընկնող արեգակնային ճառագայթման չափումը .....                                | 23        |
| <b>5. Ներքին օդի ջերմաստիճան, ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավություն չափող գրանցող դյուրակիր սարքեր (լոգերներ) .....</b>               | <b>25</b> |
| Փորձ 5.1 Տարբեր կողմնորոշում ունեցող սենքերի ներքին ջերմաստիճանների 24 ժամյա մոնիտորինգ .....                                              | 26        |
| Փորձ 5.2 Սենքում ջերմաստիճանի և օդի հարաբերական խոնավության հետազոտություն, համեմատություն պահանջվող հարմարավետության պայմանների հետ ..... | 27        |
| <b>6. Արտաքին օդի ջերմաստիճան, ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավության չափող ու գրանցող դյուրակիր սարքեր .....</b>                       | <b>28</b> |
| Փորձ 6.1 «Ջերմային կղզյակների» էֆեկտի ստուգումը .....                                                                                      | 29        |
| Փորձ 6.2 Ավտոմատ կառավարվող և չկառավարվող ջեռուցման համակարգերով կահավորված սենյակների 24 ժամյա ջերմաստիճանային մոնիտորինգ .....           | 30        |
| <b>7. Լյուքսմետր .....</b>                                                                                                                 | <b>32</b> |

|                                                                                        |                                                                                                                                |    |
|----------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Փորձ 7.1                                                                               | Լսարանի լուսավորվածության մակարդակի ստուգումը .....                                                                            | 32 |
| Փորձ 7.2                                                                               | Արհեստական լուսավորության աղբյուրների<br>համեմատությունը .....                                                                 | 33 |
| <b>8. Պիրոմետր</b> .....                                                               |                                                                                                                                | 34 |
| Փորձ 8.1                                                                               | Շենքի արտաքին կոնստրուկցիաների մակերևույթի<br>ջերմաստիճանային մոնիտորինգ .....                                                 | 34 |
| Փորձ 8.2                                                                               | Անհասանելի բարձրության վրա գտնվող օբյեկտների<br>ջերմաստիճանի չափում .....                                                      | 35 |
| <b>9. Կոնտակտային ջերմաչափ</b> .....                                                   |                                                                                                                                | 36 |
| Փորձ 9.1                                                                               | Սենքի ներսի օդի և պատող կոնստրուկցիայի ներքին<br>մակերևույթի ջերմաստիճանների նորմավորվող տարբերության<br>ստուգումը .....       | 37 |
| Փորձ 9.2                                                                               | Ջեռուցման կանգնակի ջերմաստիճանային բաշխման<br>ուսումնասիրությունը .....                                                        | 38 |
| <b>10. Անեմոմետր</b> .....                                                             |                                                                                                                                | 39 |
| Փորձ 10.1                                                                              | Սենքերում օդի շարժման կոմֆորտային պայմանի<br>ստուգում .....                                                                    | 39 |
| Փորձ 10.2                                                                              | Մեխանիկական օդափոխության արդյունավետության<br>ստուգում .....                                                                   | 40 |
| <b>Հավելվածներ</b> .....                                                               |                                                                                                                                | 41 |
| Հավելված 1                                                                             | Շինարարական նյութերի ջերմահաղորդականության<br>գործակիցների արժեքները .....                                                     | 41 |
| Բնական ծագում ունեցող սորուն քարային նյութերի<br>ջերմահաղորդականության գործակիցը ..... |                                                                                                                                | 41 |
| Հավելված 2                                                                             | Պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման<br>պահանջվող դիմադրություններն ըստ ՀՀՇՆ II-7.02-95 նորմերի .....                         | 47 |
| Հավելված 3                                                                             | ՀՀ տարածքի հաշվարկային կլիմայական հարաչափերը<br>ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 .....                                                    | 49 |
| Հավելված 4                                                                             | Հասարակական, բնակելի, օժանդակ շենքերի հիմնական<br>սենքերի լուսավորության նորմավորվող ցուցանիշներն ըստ<br>ՀՀՇՆ II-8.03-96 ..... | 52 |
| <b>Օգտագործված գրականության ցանկ</b> .....                                             |                                                                                                                                | 54 |

## **Ուսումնամեթոդական ձեռնարկի ուսուցման ծրագիրը, արդյունքները, հիմնական հասկացությունները**

---

### **Ծրագիր**

Ծանոթություն շենքերի ջերմատեխնիկական հիմնական հարաչափերը չափող և գրանցող սարքավորումների, գործիքային չափագրման եղանակների հետ, շենքերի ջերմային պաշտպանության վերլուծության և գնահատման գիտելիքների փոխանցում:

### **Ուսուցման արդյունքներ**

Շինարարական ջերմատեխնիկական հարաչափերի չափագրում/ստուգում, չափագրող սարքերի ինքնուրույն օգտագործում, ելակետային տվյալների և չափման արդյունքների մշակում, շենքերի ջերմային պաշտպանության վերլուծության, էներգախնայողության գնահատման գիտելիքների տիրապետում, էներգետիկ աուդիտի ոլորտում հետագա ուսումնասիրություններ իրականացնելու, շենքերի ջերմային պաշտպանության բարձրագույն միջոցառումներ ներկայացնելու ունակություններ:

## **Հիմնական հասկացություններ**

Շենքերի ջերմային պաշտպանություն, ջերմատեխնիկական հարաչափեր, էներգետիկ աուդիտ, ջերմատեխնիկական ցուցանիշների գործիքային չափագրում, ստվերում, ջերմային կամուրջ, լուսավորում, շենքի կողմնորոշում, ճառագայթում, օդի շարժման արագություն, միկրոկլիմայական միջավայր, ջերմային հարմարավետություն

**ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ԲՈՒՈՐ ՓՈՐՁԵՐՆ  
ԱՆՅ ԵՆ ԿԱՅՎՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ**

## Ներածություն

---

Շենքերի և շինությունների էներգաարդյունավետության բարձրացումը քաղաքաշինության ոլորտի ՀՀ պետական քաղաքականության կարևոր հարցերից մեկն է: «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագրի նպատակներից է աջակցել ապագա ճարտարապետների, ճարտարագետների մասնագիտական ուսուցման շրջանակների ընդլայնմանը, էներգախնայող շենքերի նախագծման և կառուցման հմտությունների ձեռքբերմանը, ուսանողների ու մասնագետների գիտակցության մեջ բնապահպանական մտածելակերպի ձևավորմանն ու ամրապնդմանը [6]: Ծրագրի աջակցությամբ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ստեղծվել է «Էներգաարդյունավետության» ուսուցողական լաբորատորիան, համալրված՝ «ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներկրվող ջերմամեկուսիչ նյութեր» ցուցատախտակով, ՀՀ-ում առկա ջերմամեկուսիչ նյութերի շտեմարանով, մասնագիտական թարմ գրականությամբ, ինչպես նաև հետևյալ չափիչ, հսկիչ գործիքներով և սարքերով.

1. Ջերմահաղորդականության գործակցի որոշման սարք՝ 1 հատ,
2. Արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման «Ս» փաստացի արժեքի չափման սարք՝ 1 հատ,
3. Ինֆրակարմիր ջերմացույց սարք՝ 1 հատ,
4. Օդերևութաբանական կայան՝ 1 հատ,

5. Ներքին օդի ջերմաստիճան չափող և գրանցող դյուրակիր սարք (լոգեր)՝ 4 հատ,
6. Ներքին օդի ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավություն չափող և գրանցող դյուրակիր սարք (լոգեր)՝ 2 հատ,
7. Արտաքին օդի ջերմաստիճան չափող և գրանցող դյուրակիր սարք (լոգեր)՝ 2 հատ,
8. Արտաքին օդի ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավություն չափող և գրանցող դյուրակիր սարք (լոգեր)՝ 2 հատ,
9. Լյուքսմետր՝ 1 հատ,
10. Պիրոմետր՝ 1 հատ,
11. Կոնտակտային ջերմաչափ՝ 1 հատ,
12. Անեմոմետր՝ 1 հատ:

Շենքերի կառուցվածքային տարրերի ջերմատեխնիկական բնութագրերի փաստացի արժեքների որոշումը հանդիսանում է դրանց էներգաարդյունավետության գնահատման ու բարձրացման կարևոր գործոն: Ջերմատեխնիկական հարաչափերի գործիքային չափագրումն առաջին քայլն է շենքերի էներգետիկ աուդիտի, հետագայում նաև շենքերի էներգետիկ անձնագրավորման, էներգաարդյունավետության դասի որոշման՝ պիտակավորման գործընթացների համար [6]:

Ձեռնարկում նկարագրված փորձերի կատարումը, ստացված տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության իմացությունները նպաստելու են ուսանողների կողմից «Շենքերի

Էներգետիկ արդյունավետություն. Շենքի պատող կոնստրուկցիաներ», «Շենքերի էներգաարդյունավետությունը. պասիվ լուծումներ», «Էներգիա, բնական ռեսուրսներ և մարդածին միջավայր», «Շենքերին ինտեգրված վերականգնվող էներգետիկա», «Շենքերի նյութերը, էներգաարդյունավետությունը և բնապահպանական առողջ մոտեցումը», «Շենքերի նախագծման, կառուցման և շահագործմանը հանձնման ինտեգրված մոտեցումը», «Շենքերի և արտադրական ձեռնարկությունների էներգետիկ աուդիտ և անձնագրավորում» մոդուլների, ինչպես նաև «Շինարարական ֆիզիկա», «Շինարարական կլիմայաբանություն» առարկաների լիարժեք յուրացմանը:

## 1. Ջերմահաղորդականության գործակցի որոշման սարք

---



Մոդելը՝ ИТП-МГ4 100

Ջերմահաղորդականության  
չափման տիրույթը՝

0.02...1.5 Վտ/մ K

Ճշտության դասը՝ 5 %

Չափվող նմուշի հաստու-  
թյունը՝ 10...30 մմ

Փորձարկման ժամանակա-  
հատվածը՝ 120 րոպե

Հիշողությունը՝ 100 արժեք

Նկ. 1. Ջերմահաղորդականության  
գործակցի որոշման սարք  
ИТП-МГ4 100

Սարքի աշխատանքի սկզբունքը ըստ ԳՕՍՏ 7076-99-ի հիմնված է ջերմային հաստատուն (ստացիոնար) հոսքի ստեղծման վրա, որն ուղղահայաց անցնում է որոշակի հաստությամբ նմուշի միջով [11]: Ուսուցողական նպատակով ИТП-МГ4 100 ստացիոնար սարքի օգնությամբ տարբեր նյութերից պատրաստված նմուշների ջերմահաղորդականության գործակցների որոշման փորձերն իրականացվում են ՃՀՀԱՀ «Էներգաարդյունավետության» լաբորատորիայում, առաջնորդվելով

սարքի անձնագրում բերված հերթականությամբ, լաբորանտի անմիջական մասնակցությամբ:

### **Փորձ 1.1 Նյութի ջերմահաղորդականության $\lambda$ գործակցի որոշումը**

Ջերմահաղորդականության քանակական գնահատականը բնորոշվում է ջերմահաղորդականության  $\lambda$  գործակցով՝ ջերմության այն հոսքով, որն անցնում է միավոր հաստություն ունեցող նյութի շերտի միջով, միավոր ժամանակամիջոցում, երբ շերտի իրար զուգահեռ մակերեսների ջերմաստիճանների միջև տարբերությունը կազմում է  $1^{\circ}\text{C}$  [9]:

Ջերմահաղորդականության գործակցի արժեքը չափելու համար պատրաստվում են  $100 \times 100$  չափերով նմուշներ, որոնց համար կախված  $\lambda$  արժեքից գոյություն ունեն հանձնարարելի հաստություններ և ջերմաստիճանների տարբերություններ [10]: ИТП-МГ4 100 սարքի լրակազմում կա նաև հաստուկ արկղիկ, որի օգնությամբ հնարավոր է չափել սորուն նյութերի ջերմահաղորդականության գործակիցը:

Սարքի էլեկտրասնուցումը միացնելուց հետո, դիտարկվող նմուշը տեղադրվում է փորձասարքի մեջ: Էլեկտրոնային բլոկի վրա ներմուծվում են նմուշի հաստությունը (մմ), հակադարձ՝ սառը և տաք կողմերի ջերմաստիճանները՝  $T_{\text{ս}}$ ,  $T_{\text{տ}}$ , ..սարքի դիսպլեյի վրա գտնվող  $\uparrow$  և  $\downarrow$  սլաքներով ընտրվում է «Չափում» ռեժիմը: Փորձի վերջում դիսպլեյի վրա արտաբերվում է նմուշի  $\lambda$  գործակցի արժեքը ( $\text{Վտ/մ}^2\cdot\text{K}$ ),  $R$  ջերմահաղորդականության դիմադրության արժեքը ( $\text{մ}^2\cdot\text{K/Վտ}$ ) և նմուշի հաստությունը՝

Ի (մմ): Ընտրելով «Արխիվ» ռեժիմը ստացված տվյալները գրանցվում և պահվում են սարքի հիշողության մեջ:

Փորձը սկսվում է առաջին դասին, իսկ հաջորդին կատարվում է ստացված տվյալների վերլուծությունը:

Ստացված տվյալները համեմատվում են սույն ձեռնարկի Հավելված 1-ում բերված արժեքների հետ, կատարվում է եզրակացություն:

## 2. Արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման «Ս» փաստացի արժեքի չափման սարք

---



Մոդել՝ **STM 200 U**

Ջերմափոխանցման չափման

տիրույթը՝  $0.1...10 \text{ Վտ/մ}^2\cdot\text{K}$

Ճշտության դասը՝ 6 %

Փորձարկման ժամանակա-

հատվածը՝ 30 րոպե

Հիշողությունը՝ 500 արժեք

Քաշը՝ 1 կգ

Նկ. 2. Արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման «Ս» փաստացի արժեքի չափման STM 200 U սարք

Շենքերի ջերմային պաշտպանության գնահատման, հետազայում նաև էներգետիկ աուդիտ անցկացնելու հարցում, կարևոր նշանակություն ունի արտաքին կոնստրուկցիաների ջերմափոխանցման կամ այսպես կոչված «Ս» արժեքի որոշումը:

**STM 200 U** սարքի միջոցով պատող կոնստրուկցիայի «U» արժեքը որոշվում է տվյալ պահին դրսի օդի ջերմաստիճանի՝  $t_n$  (°C), ներսի օդի ջերմաստիճանի՝  $t_n$  (°C), կոնստրուկցիայի ներքին մակերևույթների ջերմաստիճանի՝  $t_{\text{in}}$  (°C) չափումներից ելնելով:



Նկ. 3. Սարքի դիսպլեյի տեսքը

Սարքին միացված 3 զոնդերի (զոնդերը հատուկ մածուկով ամրացվում են պատին) և 1 անլար տվիչի օգնությամբ որոշվում են պահանջվող ջերմաստիճանները և փոխանցվում STM200U սարքին, իսկ ներսի օդի ջերմաստիճանը որոշվում է սարքի մեջ ներդրված տվիչով: Հաշվարկվում և դիսպլեյին արտաբերվում են կոնստրուկցիայի «U» փաստացի արժեքը (Վտ/մ² K), կոնստրուկցիայի ներսի մակերևույթի, դրսի, սենքի ներսի օդի ջերմաստիճանները: Չափումների ճշտությունն ապահովելու համար պետք է, որ դրսի և ներսի ջերմաստիճանային տարբերությունը կազմի առնվազն 20 °C:

Համաձայն ԳՈՍՏ 25380-82-ի մեթոդաբանությանը, պատող կոնստրուկցիայի ջերմափոխանցման որոշումը բավականին աշխատատար և երկարատև պրոցես է, որը կախված է բազմաթիվ գործոններից՝ ջերմային հոսքի խտությունից, հաստատուն ջերմային հոսքի ապահովումից, ստացված տվյալների մշակումից և ճշգրիտ հաշվարկումից [12]: STM 200U սարքի օգնությամբ հնարավոր չէ ճշգրիտ արդյունքներ ստանալ,

սակայն չափումները թույլ են տալիս գնահատել, պատկերացում կազմել ջերմափոխանցման «Ս» արժեքի մասին:

**Փորձ 2.1 Արտաքին պատի ջերմափոխանցման չափված և հաշվարկային արժեքների համեմատությունը**



Նկ. 4. Սենյակում STM200U սարքի տեղադրումը

Փորձը կատարվում է լսարանում մեկ դասաժամի ընթացքում: Դասի սկզբում վերը նկարագրված ձևով տեղադրվում է սարքը: Դասի վերջում դիտարկվում են սարքի դիսպլեյին արտաբերված չափումների արդյունքները, մասնավորապես՝ լսարանի արտաքին պատի ջերմափոխանցման չափված արժեքը: Փորձի ընթացքում, օգտվելով ստորև բերված բանա-

ձևերից, հաշվարկային եղանակով որոշվում է դիտարկվող կոնստրուկցիայի ջերմափոխանցման արժեքը [9]:

Պատող կոնստրուկցիաների ջերմափոխանցման  $U$  արժեքի որոշման համար նախ որոշվում է կոնստրուկցիայի դիմադրության  $R_0$  արժեքը, որն ըստ ՀՀՇՆ II-7.02-95 նորմերի որոշվում է [2]՝

$$R_0 = \frac{1}{\alpha_{\text{ն}}} + R_{\text{ղ}} + \frac{1}{\alpha_{\text{դ}}},$$

որտեղ  $\alpha_{\text{ն}}$ ՝ պատող կոնստրուկցիայի ներքին մակերևույթի ջերմատվության գործակիցն է,  $\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot ^\circ\text{C})$ , պատերի, հատակների հարթ առաստաղների համար հավասար է՝  
 $\alpha_{\text{ն}} = 8,7 \text{ Վտ}/(\text{մ}^2 \cdot ^\circ\text{C})$ ,

$\alpha_{\text{դ}}$ ՝ պատող կոնստրուկցիայի արտաքին մակերևույթի ջերմատվության գործակիցն է,  $\text{Վտ}/(\text{մ}^2 \cdot ^\circ\text{C})$ , արտաքին պատերի, կտուրների, անցումների վրայի ծածկերի համար հավասար է՝  $\alpha_{\text{դ}} = 23 \text{ Վտ}/(\text{մ}^2 \cdot ^\circ\text{C})$ ,

$R_{\text{ղ}}$ ՝ պատող կոնստրուկցիայի ջերմային դիմադրությունն է, որը որոշվում է

$$R_{\text{ղ}} = R_1 + R_2 + \dots + R_n$$

բանաձևով, որտեղ՝  $R_1, R_2, \dots, R_n$  ( $\text{մ}^2 \cdot ^\circ\text{C}/\text{Վտ}$ ) կոնստրուկցիայի առանձին համասեռ շերտերի ջերմային դիմադրություններն են՝ համապատասխան շերտերի հաստության ( $\text{մ}$ ) և այդ շերտի ջերմահաղորդականության գործակցի  $\lambda$  ( $\text{մ} \cdot ^\circ\text{C}/\text{Վտ}$ ) հարաբերությունն է՝

$$R_1 = \frac{\delta_1}{\lambda_1}; R_2 = \frac{\delta_2}{\lambda_2}; \dots; R_n = \frac{\delta_n}{\lambda_n};$$

Ստանալով  $R_0$ -ի արժեքը՝ հաշվարկվում է կոնստրուկցիայի ջերմափոխանցման արժեքը.

$$U = \frac{1}{R_0}$$

Երկու եղանակով ստացված արժեքները՝ փորձնական ու տեսական, համեմատվում են նախ իրար հետ, այնուհետև հաշվարկով ստացված  $R_0$ -ի արժեքը համեմատվում է Հավելված 2-ում բերված արժեքների հետ, կատարվում է եզրակացություն:

### 3. Ինֆրակարմիր ջերմացույց սարք

---



Նկ. 5. Ինֆրակարմիր ջերմացույց սարք testo 876

|                                                                              |                                                                                               |
|------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------|
| Մոդելը՝ <b>Testo 876</b>                                                     | Ճշտության դասը (առնվազն) $\pm 2^{\circ}\text{C}$                                              |
| Դետեկտորի տիպը՝ FPA 160 x 120 պիկսել                                         | կամ չափվող մեծության $\pm 2\%$ ( $-20^{\circ}\text{C} \dots +280^{\circ}\text{C}$ տիրույթում) |
| Ջերմաստիճանային զգայունությունը (NETD) < 80 մԿ 30 $^{\circ}\text{C}$ դեպքում | Ֆայլերի ձևաչափը bmt, bmp, jpg, png, csv, xls ֆորմատներ արտահանման հնարավորությամբ             |
| Օպտիկական տեսադաշտը 9°x7°                                                    | Հիշողություն (առնվազն)՝ SD                                                                    |
| Նվազագույն ֆոկուսային հեռավորությունը 0.5 մ                                  | հիշողության քարտ, 2 Գբ (մոտ 1000 լուսանկար)                                                   |

Ցանկացած օբյեկտ ճառագայթում է տարբեր հաճախության էլեկտրամագնիսական ալիքներ, այդ թվում նաև ինֆրակարմիր, այլ կերպ ասած՝ ցանկացած օբյեկտ ջերմություն է ճառագայթում: Հայտնի է, որ մարմնի ջերմային ճառագայթման ինտենսիվությունը ուղղակիորեն կախված է նրա ջերմաստիճանից: Ջերմացույցը մի սարք է, որի միջոցով հնարավոր է արտաբերել և դիտարկել տվյալ պահին օբյեկտի ջերմային

Ճառագայթման պատկերը: Ջերմացույցի աշխատանքի սկզբունքը կայանում է ինֆրակարմիր ճառագայթման՝ էլեկտրական ազդակի փոխակերպման մեջ, որը հզորացվում և արտաբերվում է սարքի էկրանին: Սարքի հիմնական տարրերն են մատրիցան և օբյեկտիվը: Ինֆրակարմիր ջերմացույցները լայնորեն օգտագործվում են շինարարությունում և այլ բնագավառներում: Ջերմացույցը առավել հայտնի է որպես շենքերի ջերմագրաֆիա իրականացնելու՝ շենքում ջերմաստիճանի կամ ջերմության բաշխումը որոշելու սարք: Ինֆրակարմիր պատկերի վրա օբյեկտի տարբեր ջերմաստիճանային տիրույթներին համապատասխանում է որոշակի գույն: Սարքի էկրանին կարող են արտաբերվել նաև գույներին համապատասխանող ջերմաստիճանները: Ջերմագրաֆիայի օգնությամբ հնարավոր է բացահայտել շենքի ջերմության կորուստների աղբյուրները կամ ջերմային կամուրջները, կոնստրուկցիաներում թաքնված ինժեներական վթարները, էլեկտրատեխնիկական կոմունիկացիաներում և ջերմամեկուսացման աշխատանքներում թերացումները և այլն:

Ժամանակակից ջերմացույցի օգնությամբ հնարավոր է պատկերացում կազմել շենքի ջերմային պաշտպանության վիճակի մասին: Արդյունքների ճշտությունն ապահովելու համար չափումները ցանկալի է կատարել հետևյալ պայմաններում՝

- վաղ առավոտյան կամ ուշ երեկոյան,
- դրսի և ներսի ջերմաստիճանային տարբերությունը պետք է լինի առնվազն 10-20 °C,


- չոր եղանակին, երբ քամու արագությունը չի գերազանցում 2 մ/վրկ,
- ներսում չափումներ իրականացնելիս պետք է փակ պահել դռներն ու պատուհանները:

### **Փորձ 3.1 Շենքի ջերմության կորուստների կամ «ջերմային կամուրջների» հայտնաբերումը**

Փորձը նպատակահարմար է կատարել ջեռուցման սեզոնի ընթացքում: Փորձը կատարվում է երկու փուլով. դրսում անց են կացվում արտաքին չափումները, լսարանում՝ ստացված տվյալների վերլուծությունը և եզրակացությունների ձևակերպումը:

Սարքի օբյեկտիվն ուղղվում է ընտրված շենքի դիտարկվող հատվածին, «ON» կոճակով միացվում է սարքը, սարքի դիսպլեյին ի հայտ է գալիս տվյալ օբյեկտի ինֆրակարմիր պատկերը, այնուհետև «SAVE» կոճակով սարքի հիշողության մեջ պահպանվում է նկարված պատկերը: Հաջորդ փուլում testo 876 սարքից տվյալները ներբեռնվում են համակարգչի մեջ: Ինֆրակարմիր պատկերի ուսումնասիրությունը թույլ է տալիս հայտնաբերել դիտարկվող օբյեկտի առավել խոցելի, ջերմային կորուստներ ունեցող տեղամասերը:

Կատարված փորձի արդյունքների հիման վրա ուսանողը ձևակերպում է եզրակացությունը:




Նկ. 6. Շենքերի ճակատների ինֆրակարմիր պատկերներ

### Փորձ 3.2 Ստվերման արդյունավետության գնահատումը

Փորձի նպատակն է ինֆրակարմիր ջերմացույցի օգնությամբ ապացուցել ստվերման փաստացի արդյունավետությունը: Ընտրվում է շինություն, որի՝ միևնույն կողմնորոշում ունեցող արտաքին կոնստրուկցիայի (պատ, լուսամուտ) մի մասը գտնվում է ստվերի տակ, այսինքն՝ պատսպարված է արևի ճառագայթումից հատուկ կառուցվածքներով կամ բուսականությամբ, իսկ մյուս մասն անպաշտպան է: Չափումը կատարվում է տարվա շոգ եղանակին, փորձ 3.1-ում բերված

հերթականությամբ: Փորձի ավարտին ուսանողը ձևակերպում է եզրակացությունը:



Նկ. 7. Ջերմային կամուրջի հայտնաբերման օրինակներ

### Փորձ 3.3 «Զով» տանիքի առավելությունների գնահատումը

Տանիքները կարող են հանդիսանալ թե՛ ջերմային կորուստների և թե՛ ջերմության թափանցումների աղբյուր: Ամառային շոգ օրերին տանիքի ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 70 °C: Տանիքների ծածկի բարձր ջերմաստիճանը խիստ նվազեցնում է դրանց տակ գտնվող սենքերի ջերմային հարմարավետության մակարդակը:



Նկ. 8. «Զով» տանիքների օրինակ

Խնդրի լուծման ճանապարհներից է այսպես կոչված «զով» տանիքների կիրառությունը, ինչը միջազգային ճարտարապետական պրակտիկայում լայն տարածում ունի: Տարբեր նյութերով պատված տանիքների համեմատական վերլուծությունը հնարավոր է իրականացնել ինֆրակարմիր ջերմացուցի օգնությամբ դիտարկելով վերջին հարկերի առաստաղները [8]:

## 4. Օդերևութաբանական կայան



Մոդել՝ **HOBO U30**

Աշխատանքային հարաջափերը՝ -  
20...40°C

Հիշողություն՝ 512 կբ լուկալ  
Տվյալների գրանցման միջակայք՝  
1 վ-ից 18 ժամ,

Արեգակնային պանելի  
հզորությունը՝ 3.0 Վտ

Չափերը՝ 17.8 x 11.7 x 19.3 (սմ)



Քաշը՝ 2 կգ

Ջերմաստիճանային տվիչ.  
չափման տիրույթը՝ -40...100°C  
ճշտության դասը  $< \pm 0.2^\circ \text{C}$   
(0...50°C տիրույթում),

Արեգակի ճառագայթման տվիչ.  
զգայունության տիրույթը՝  
0...1280 Վտ/մ<sup>2</sup>

Ճշտության դասը  $\pm 10$  Վտ/մ<sup>2</sup>

Նկ. 9. HOBO U30 արևային մարտկոցով և 2 տվիչներով  
օդերևութաբանական կայան

HOBO U30 կայանը նախատեսված է արտաքին միջավայրի օդերևութաբանական տվյալների չափագրման, գրանցման և մոնիտորինգի համար: Կայանը գործարկելու համար օգտագործվում է HOBOware®Pro ծրագիրը, ինչը հնարավորություն է ստեղծում մշակել, ստուգել ու գրաֆիկական տեսքով արտաբերել մինչև 15 տվիչներից ստացված տվյալները: Կայանի

գործարկումը պետք է կատարել, առաջնորդվելով սարքի անձնագրում ներկայացված քայլերի հաջորդականությամբ:

HOBO U30 օդերևութաբանական կայանը հնարավորություն ունի չափագրելու տեղանքի եղանակային հետևյալ հարաչափերը. բարոմետրական ճնշումը, լույսի ինտենսիվությունը, օդի հարաբերական խոնավությունը, հողի խոնավությունը, արևային ճառագայթման ինտենսիվությունը, օդի ջերմաստիճանը, քամու արագությունը և ուղղությունը և այլն: Ներկայացված տվիչների լրակազմով օդերևութաբանական կայանի օգնությամբ հնարավոր է չափագրել միջավայրի ջերմաստիճանը և տարբեր մակերևույթների (ասֆալտ, բետոն, բնահող, ջրային հայելի, խոտածածկ այլն) ճառագայթման ինտենսիվությունը:

**Փորձ 4.1 Շենքերի հորիզոնական, ուղղահայաց և թեք մակերևույթներին ընկնող արեգակնային ճառագայթման չափումը**

Արևի ճառագայթման հաշվարկային մեծությունն ամենամեծ արժեքն ունի ամռանը, հորիզոնական մակերևույթի վրա, անամպ երկնքի պայմաններում: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի Աղյուսակ 2.3-ի, արևի գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթման ամենամեծ արժեքը՝  $3,63 \text{ (ՄՋ/մ}^2\text{)}$ , համապատասխանում է  $40^\circ$  աշխարհագրական լայնությանը, հուլիսին, 12-13 ժամային միջակայքին [1]:

Փորձի նպատակն է ստանալ Երևանում հորիզոնական մակերևույթի վրա ընկնող արեգակնային ճառագայթման արժեքները տարվա մյուս եղանակներին: Չափումներն իրականացնելու համար HOBO U30 օդերևութաբանական կայանը

տեղադրվում է համալսարանի տանիքին: Ամրացվում են համապատասխան տվիչները: Մի քանի օրվա ընթացքում հավաքագրված տվյալները ներբեռնվում են համակարգչի մեջ: Վերլուծելով ստացված արդյունքները, որոշվում են ճառագայթման միջինացված արժեքները տարբեր ամիսներին, տարբեր ժամերի համար:



Նկ. 10. Թեք տանիքին արևային կոլեկտորի տեղադրման օրինակ

Սարքի աշխատանքին և տվյալների հավաքագրման գործընթացին ծանոթանալու համար նպատակահարմար է այն կիրառել ուսումնական պրակտիկայի, ինչպես նաև ավարտական թեզերի գիտական հետազոտություններն իրականացնելու ժամանակ: Սարքի օգնությամբ հետազոտություններ հնարավոր է իրականացնել տարբեր թեքության մակերեսների վրա ընկնող արեգակնային ճառագայթման ինտենսիվության վերաբերյալ:

## 5. Ներքին օդի ջերմաստիճան, ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավություն չափող գրանցող դյուրակիր սարքեր (լոգերներ)

---



Նկ. 11. HOBO U10 001 լոգեր

### Մոդել՝ **HOBO U 10 001**

Չափման տիրույթը՝  $-20...70^{\circ}\text{C}$ ,  
ճշտության դասը՝  $\pm 0.53^{\circ}\text{C}$   
( $0...50^{\circ}\text{C}$  տիրույթում)

Աշխատանքային հարաչափերը՝  
ջերմաստիճանը  $-20...70^{\circ}\text{C}$ ,  
հարաբերական խոնավություն՝  
 $0...95\%$ ,

Հիշողություն 64 կբ (52,000  
չափումները 10-բիտ)

Քաշը՝ 26 գրամ

Չափերը՝ 45 x 60 x 20 (մմ)



Նկ. 12. HOBO U12 001 լոգեր

### Մոդել՝ **HOBO U 12 011**

Չափման տիրույթը.  
ջերմաստիճան՝  $-20...70^{\circ}\text{C}$ ,  
հարաբերական խոնավություն՝  
 $5...95\%$ ,

ճշտության դասը.  
ջերմաստիճան՝  $\pm 0.35^{\circ}\text{C}$  ( $0...50^{\circ}\text{C}$   
տիրույթում),

հարաբերական խոնավություն՝  
 $\pm 2.5\%$  ( $10...90\%$  տիրույթում),

Աշխատանքային հարաչափերը.  
ջերմաստիճանը  $-20...70^{\circ}\text{C}$ ,  
հարաբերական խոնավություն՝  
 $0...95\%$

Հիշողություն 64 կբ (43,000  
չափումները 12-բիտ)

Քաշը՝ 46 գրամ

Չափերը 58 x 74 x 22 (մմ)

Ս-սերիայի լոգերների (գրանցող սարքերի) կողմից գրանցված տվյալների ներբեռնման համար անհրաժեշտ է USB լարի և HOBOWare® ծրագրի առկայությունը: USB լարով միացվում են համակարգչի USB մուտքը գրանցող սարքին, նախապես թողարկված ծրագրի միջոցով համակարգչի մեջ ներբեռնվում են գրանցումները: HOBOW U10 001 և HOBOW U12 լոգերները ապահովում են ներքին միջավայրի օդի ջերմաստիճանի և խոնավության ճշգրիտ մոնիտորինգ:

#### **Փորձ 5.1 Տարբեր կողմնորոշում ունեցող սենքերի ներքին ջերմաստիճանների 24 ժամյա մոնիտորինգ**

Փորձի նպատակն է ի հայտ բերել շենքի տարբեր կողմնորոշում ունեցող սենքերի ջերմաստիճանային տատանումների օրինաչափությունները օրվա տարբեր ժամերին, ապացուցել հարավային կողմնորոշում ունեցող սենքերի ջերմային հարմարավետության առավելությունը: Փորձը կատարվում է տարվա ցուրտ ժամանակաշրջանում: Համալսարանի շենքի տարբեր լսարաններում 24 ժամով տեղադրվում են 2 հատ HOBOW U10 001 և 2 հատ HOBOW U12 լոգերները, որոնց չափումների գրանցման պարբերականությունը ընտրվում է 15 րոպե: 24 ժամից լոգերները հանվում են: Հաջորդ դասին լոգերների կողմից գրանցված տվյալները ներբեռնվում են համակարգչի մեջ, կատարվում է համեմատություն և եզրակացություն:

**Փորձ 5.2 Մենքում ջերմաստիճանի և օդի հարաբերական խոնավության հետազոտություն, համեմատություն պահանջվող հարմարավետության պայմանների հետ**

Փորձը կատարվում է լսարանում, 11 HOBO U10 001 և HOBO U12 2 լոգերների օգնությամբ: Լոգերներն ամրացվում են լսարանում  $h=1,5$ մ հատակից բարձր, աշխատանքային գոտում, չափումների գրանցման պարբերականությունը ընտրվում է 2 րոպե: 30 րոպեից լոգերների կոդմից գրանցված տվյալները ներբեռնվում են համակարգչի մեջ: Լոգերների կոդմից գրանցված տվյալները միջինացվում են:

Համաձայն ՀՀՇՆ IV-12 02.01-04 նորմերի բնակելի և հասարակական սենքերում ներսի օդի ջերմաստիճանը չպետք է գերազանցի  $20-22^{\circ}\text{C}$ -ը, հարաբերական խոնավությունը՝  $30-60\%$ -ը: Ստացված տվյալները համեմատվում են պահանջվող մեծությունների հետ, կատարվում է եզրակացություն:

Նմանատիպ փորձ կիրառելի է այլ նշանակության սենքերի՝ բնակարանի խոհանոցի, ննջասենյակի, ճաշասենյակի, հասարակական սննդի սրահների, խանութների և մեծ խոնավության անջատումներ ունեցող այլ սենքերի համար:

## 6. Արտաքին օդի ջերմաստիճան, ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավություն չափող ու գրանցող դյուրակիր սարքեր



Նկ. 13. HOBO U 23004 և



Նկ. 14. HOBO U 23 002

### Մոդել՝ **HOBO U 23 004**

Չափման տիրույթը  $-40...100^{\circ}\text{C}$

ճշտության դասը  $\pm 0.21^{\circ}\text{C}$  ( $0...50^{\circ}\text{C}$  տիրույթում)

Աշխատանքային հարաչափերը, ջերմաստիճան՝  $-40...100^{\circ}\text{C}$ , հարաբերական խոնավություն՝  $0...95\%$ ,

Հիշողություն՝ 64 կբ (մոտ 21,000 չափումներ)

Քաշը՝ 102 գրամ

Չափերը՝  $10.2 \times 3.8$  (սմ)

### Մոդել՝ **HOBO U 23 002**

Չափման տիրույթը.

ջերմաստիճան՝  $-40...70^{\circ}\text{C}$ , հարաբերական խոնավություն՝  $0...100\%$ ,

ճշտության դասը. ջերմաստիճան  $\pm 0.21^{\circ}\text{C}$  ( $0...50^{\circ}\text{C}$  տիրույթում),

հարաբերական խոնավություն  $\pm 2.5\%$  ( $10...90\%$  տիրույթում), առավելագույնը 3.5%,

Հիշողություն՝ 64 կբ (մոտ 21,000 չափումներ)

Քաշը՝ 118 գրամ

Չափերը՝  $10.2 \times 3.8$  (սմ)

HOBO U23 004 և HOBO U23 002 արտաքին օդի ջերմաստիճան, ջերմաստիճան և օդի հարաբերական խոնավություն չափող, գրանցող լոգերները լայն կիրառություն ունեն, քանի որ արտաքին միջավայրի ազդեցությունից պատյանով պաշտպան-

ված լինելու շնորհիվ գրանցում են մեծ ճշտության չափումներ: HOBO U23 002 լոգերները կիրառելի են նաև խոնավության զգալի անջատումներով ներքին տարածքների ուսումնասիրության նպատակով, օրինակ՝ ջերմոցներում, լողավազանների սրահներում խոնավության և ջերմաստիճանի չափագրման, մոնիտորինգի համար:


#### **Փորձ 6.1 «Ջերմային կղզյակների» էֆեկտի ստուգումը**

Քաղաքային խիտ կառուցապատված միջավայրում հաճախ հանդիպում ենք այսպես կոչված «ջերմային կղզյակների էֆեկտին», որի առաջացման պատճառը հետևյալն է. օրվա ցերեկային ժամերին արևային ճառագայթներից ստացված ջերմությունը կլանվում է շենքերի պատերի, տանիքների, ասֆալտի կողմից, իսկ գիշերային ժամերին այն փոխանցվում է շրջակա միջավայրին: Փորձը նպատակահարմար է կատարել շոգ եղանակին ՃՇՀԱՀ-ի բակում երկու լոգերների օգնությամբ: Լոգերներից մեկն ամրացվում է մոտակա շենքից 2մ ոչ հեռու գտնվող որևէ ծառի վրա, մյուսը շենքերից հեռու, պուրակում գտնվող ծառի վրա: Պետք է հետևել, որ լոգերները արևի ուղիղ ճառագայթների տակ չամրացվեն: Տվյալների գրանցման տևողությունը ընդունվում է 24 ժամ, իսկ պարբերականությունը՝ 30 րոպե: Լոգերները հանելուց հետո գրանցումները ներբեռնվում են համակարգչի մեջ, ստացված արդյունքները համեմատվում են, կատարվում է եզրակացություն:

**Փորձ 6.2 Ավտոմատ կառավարվող և չկառավարվող ջեռուցման համակարգերով կահավորված սենյակների 24 ժամյա ջերմաստիճանային մոնիտորինգ**

Ջեռուցման համակարգում սենյակային թերմոստատների օգտագործման արդյունավետությունը ստուգելու համար, HOBO U լոգերների (6 հատ ներքին, 4 հատ արտաքին) օգնությամբ կատարվում է հետևյալ փորձը: Դիտարկվում են 2 առանձին սենքեր, որոնք ջեռուցվում են նույնատիպ ջեռուցման համակարգերով, ունեն միևնույն կողմնորոշումը, սակայն սենյակներից մեկի ջեռուցման սարքերը համալրված են ավտոմատ կարգավորվող թերմոստատ փականներով, մյուսինը՝ ոչ: Թերմոստատ փականների օգտագործման շնորհիվ ենթադրվում է, որ նվազում է վառելիքի ծախսը, սենքում հաստատվում է ջերմային հարմարավետության բարձր մակարդակ՝ անկախ դրսի ջերմաստիճանի տատանումներից, ներսում պահպանվում է հաստատուն ջերմաստիճան: Դիտարկվող սենքերի հանդիպակած 2 կողմերում տեղադրվում են HOBO U10 մոդելի լոգերները, դրսում՝ պատշգամբում արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված որևէ հատվածում՝ HOBO U23 004 լոգերը:

Լոգերների գրանցումները 24 ժամից ներբեռնվում են համակարգչում, կատարվում է ստացված տվյալների միջինացում, համեմատական վերլուծություն: Ստացված տվյալների գրաֆիկական պատկերը կունենա մոտավորապես նկ.15-ում բերված գրաֆիկի տեսքը: Կատարված փորձը կարելի է համարել որպես շենքերի էներգետիկ աուդիտի իրականացման օրինակ:



Նկ. 15. Ավտոմատ կարգավորվող և չկարգավորվող ջեռուցման համակարգերով սենքերի ջերմաստիճանի տատանման գրաֆիկ

## 7. Լյուքսամետր



Նկ. 16. Լյուքսամետր testo 545

Մոդել՝ **Testo 545**

Չափման տիրույթը 0...100 000

Լյուքս

Ճշտության դասը (ավելի քան) 8 %

Աշխատանքային տիրույթը

0...50°C

LCD դիսպլեյ

Քաշը՝ 500 գրամ

Չափերը 220 × 68 × 50 (մմ)

Լյուքսամետրը նախատեսված է բնական և արհեստական աղբյուրներից ստացվող լուսավորման չափման համար: Չափումները կատարվում են զգայուն ֆոտոդիոդի միջոցով: Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի լուսատեխնիկական պահանջների ապահովման համար պետք է առաջնորդվել ՀՀՇՆ II-8.03-96 «Արհեստական և բնական լուսավորում» բերված սենքերի լուսավորվածության համասեռության, աշխատանքային մակերևույթների վրա ընկնող լուսային հոսքի, միջավայրի լուսավորվածության ընդհանուր մակարդակի նորմավորվող ցուցանիշներով [5], [7]:

### **Փորձ 7.1 Լսարանի լուսավորվածության մակարդակի ստուգումը**

Փորձը կատարվում է լսարանում: Նախ չափագրվում է գրատախտակի մակերեսի վրա ընկնող լույսի հոսքը, այնուհետև հերթով բոլոր գրասեղանների մակերեսի վրա ընկնող

լույսի հոսքը: Կատարվում է համեմատություն թույլատրելի արժեքների հետ (Հավելված 4): Չափումները նպատակահարմար է կրկնել տարբեր նշանակության լսարաններում, կաբինետներում, սրահներում (նկարչական ստուդիա, սպորտային դահլիճ, նիստերի դահլիճ, լաբորատորիա և այլն), համեմատելով ստացված արժեքները թույլատրելի արժեքների հետ: Այսպիսով ի հայտ են բերվում լուսավորության տեսակետից համալսարանի առավել բարենպաստ և անբարենպաստ սենքերը: Փորձի ավարտին կատարվում է եզրակացություն:

### **Փորձ 7.2 Արհեստական լուսավորության աղբյուրների համեմատությունը**

Փորձի նպատակն է չափագրել և համեմատել արհեստական լուսավորության 2 տարբեր տեսակի աղբյուրների արդյունավետությունը՝ շիկացման և կոմպակտ ֆլյուորեսցենտային (տնտեսող) լամպերի տված լուսային հոսքի արժեքները լսարանի դասասեղանին, հատակին, գրասեղանին: Փորձի արդյունքների ճշտությունն ապահովելու համար չափումները պետք է կատարել նույն լսարանում, նույն դիրքում: Սկզբում չափումները կատարվում են շիկացման լամպերով լուսավորված սենյակում (լսարանում), այնուհետև, փոխելով լամպերը, նույն չափումները կատարվում են լյուքսմետրով: Ստացված տվյալները համեմատվում են, կատարվում է եզրակացություն:

## 8. Պիրոմետր



Նկ. 17. Պիրոմետր testo 830 T1

Մոդել՝ **Testo 830 T1**

Չափման տիրույթը  $-30...+400\text{ }^{\circ}\text{C}$

Աշխատանքային

ջերմաստիճան  $-20...+50\text{ }^{\circ}\text{C}$

Պահպանման ջերմաստիճան

$-40...+70\text{ }^{\circ}\text{C}$

Սխալանքը.  $\pm 1.5\text{ }^{\circ}\text{C}$  կամ

չափման արժեքի  $\pm 1.5\%$

( $+0.1...+400\text{ }^{\circ}\text{C}$  տիրույթում)

$\pm 2\text{ }^{\circ}\text{C}$  կամ չափման արժեքի  $\pm 2\%$

( $-30...0^{\circ}\text{C}$  տիրույթում)

Քաշը՝ 200 գրամ

Չափերը 190 x 75 x 38 (մմ)

Testo 830-T1 ինֆրակարմիր ջերմաչափի օգտագործումը դյուրին է, հնարավոր է արագ չափումներ կատարել և՛ հեռավորության վրա, և՛ կոնտակտային եղանակով:

### **Փորձ 8.1 Շենքի արտաքին կոնստրուկցիաների մակերևույթի ջերմաստիճանային մոնիտորինգ**

Չափումները կատարվում են համալսարանի բակում, դիտարկվում են համալսարանի շենքի հարավային, հյուսիսային, արևմտյան և արևելյան ճակատները: Ենթադրվում է, որ ճակատների մակերևույթի ջերմաստիճանն ըստ կողմնորոշման պետք է տարբեր լինի: Կատարվում է ստացված տվյալների համեմատություն, կազմվում է եզրակացություն:

## **Փորձ 8.2 Անհասանելի բարձրության վրա գտնվող օբյեկտների ջերմաստիճանի չափում**

Անհասանելի օբյեկտների ջերմաստիճանի չափումներ իրականացնելու հնարավորությունը կարևոր նշանակություն ունի ինժեներական համակարգերի արդյունավետության մոնիտորինգ իրականացնելու ժամանակ: Այս չափումներն անց են կացվում համալսարանի կաթսայատանը, ջեռուցման սեզոնի ժամանակ: Testo 830-T1 ինֆրակարմիր ջերմաչափի օգնությամբ չափվում է անհասանելի բարձրության վրա տեղադրված խողովակների ջերմաստիճանը, ստուգվում է ջերմամատակարարման համակարգի մատակարարող և հետադարձ ջերմատարի ջերմաստիճանների տարբերությունը, կատարվում է ծխատարի և ծխնելույզի ջերմաստիճանի չափում:

## 9. Կոնտակտային ջերմաչափ



Նկ. 18. Կոնտակտային ջերմաչափ  
TK 5.06

Մոդել՝ **TK5.06**

Աշխատանքային հարա-  
չափերը.

ջերմաստիճան՝  $-20...+50\text{ }^{\circ}\text{C}$

հարաբերական խոնավու-

թյուն  $T = 35\text{ }^{\circ}\text{C}$ -ում՝ ոչ

ավելի քան 80 %

մթնոլորտային ճնշում՝

86...106 կՊա

Ջերմաստիճանի չափման

տիրույթը՝  $-100...+1300\text{ }^{\circ}\text{C}$

Հարաբերական սխալանքը՝

$\pm 0,5\%$

հարաբերական խոնավու-

թյուն չափման տիրույ-

թը՝ 0...100 %

Բացարձակ սխալանքը՝ 3%

Չափումներն իրականացնելու համար պետք է համապա-  
տասխան տվիչը մոտեցնել դիտարկվող օբյեկտի մակերեսին  
այնպես, որ տվիչի գլխիկը հպվի ամբողջ մակերեսով: Չի  
կարելի չափումներ իրականացնել լարման տակ գտնվող  
օբյեկտների վրա: Այս սարքը մեծ կիրառություն ունի տարբեր  
հեղուկների, սորուն նյութերի ջերմաստիճանի և հարաբերա-  
կան խոնավության չափման համար:

### **Փորձ 9.1 Մենքի ներսի օդի և պատող կոնստրուկցիայի ներքին մակերևույթի ջերմաստիճանների նորմավորվող տարբերության ստուգումը**


Շենքերի արտաքին կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներից է կոնստրուկցիայի ներքին մակերևույթին այն ջերմաստիճանի ապահովումը, որի դեպքում բացառվում է օդում եղած ջրային գոլորշիների կոնդենսացումն այդ մակերեսին: Այլ կերպ ասած՝ պատի մակերեսի ջերմաստիճանը պետք է գերազանցի ջրային գոլորշիների հազեցման կամ ցողի կետի ջերմաստիճանին: Նշված պահանջն ապահովելու համար ներսի օդի և կոնստրուկցիայի ներքին մակերեսի ջերմաստիճանների տարբերությունը նորմավորված է և ըստ ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների նախագծման նորմերի» հասարակական շենքերի համար կազմում է  $\Delta t^{\text{н}} = t_{\text{в}} - \tau_{\text{в}} = 4,5^{\circ}\text{C}$ , առաստաղների համար՝  $4,0^{\circ}\text{C}$ , հատակների համար՝  $2,5^{\circ}\text{C}$ , որտեղ  $t_{\text{в}}$ -ը սենքի ներսի, իսկ  $\tau_{\text{в}}$ -ը՝ պատի ներսի մակերեսի ջերմաստիճանն է [2]:

Փորձը կատարվում է տարվա ցուրտ եղանակին լսարանում HOBO U10 001 լոգերի և TK 5.06 կոնտակտային ջերմաչափերի օգնությամբ: Դասաժամի սկզբում և վերջում կոնտակտային ջերմաչափով չափվում է արտաքին պատի ներսի մակերևույթի ջերմաստիճանը, որպես սենյակային ջերմաչափի հանդես է գալիս լոգերը, որը տեղադրվում է դասի սկզբում: Դասաժամի ավարտին համակարգչում ներբեռնվում են լոգերի կողմից գրանցված տվյալները, այնուհետև սենյակի ջերմաստիճանային միջինը և տարբերությունը: Եթե ստացված տարբերությունը գերազանցում է նշված արժեքներից, ուսանողն ինքնուրույն

միջոցառումներ է առաջարկում նորմատիվային պահանջը ապահովելու համար: Փորձի ավարտին կատարվում է եզրակացություն:

### **Փորձ 9.2 Ջեռուցման կանգնակի ջերմաստիճանային բաշխման ուսումնասիրությունը**

Ուսումնասիրությունը կատարվում է համալսարանում, ջեռուցման սեզոնի ժամանակ: testo 876 ինֆրակարմիր ջերմացույց սարքի օգնությամբ կատարվում է ջեռուցման նույն կանգնակից սնվող, տարբեր հարկերում տեղադրված ջեռուցիչ սարքերի ջերմագրաֆիան, միաժամանակ չափումներ են իրականացվում կոնտակտային ջերմաչափով, չափելով ջեռուցիչի մատակարարող և հետադարձ խողովակների ջերմաստիճանները: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվում է ջեռուցիչի միջին ջերմաստիճանը, համեմատվում՝ ջերմագրաֆիայի արդյունքների հետ: Համեմատվում են նաև տարբեր հարկերի ջեռուցման մարտկոցների ջերմագրաֆիաները, ստացվում է ջերմաստիճանի անկման օրինաչափությունն ըստ հարկերի: Փորձի նպատակն է հայտնաբերել ջեռուցման կանգնակի առավել խոցելի (վատ տաքացող) տեղամասերը: Փորձի ավարտին կատարվում է եզրակացություն:



Նկ. 19. Ջեռուցման մարտկոցի ջերմագրաֆիա

## 10. Անեմոմետր



Նկ. 20. Անեմոմետր testo 4101

### Մոդել՝ Testo 410 1

Ջերմաստիճանի չափման

տիրույթը՝  $-10 \dots +50\text{ }^{\circ}\text{C}$

Միավանքը՝  $\pm 0.5\text{ }^{\circ}\text{C}$

Քամու արագություն չափման

տիրույթը՝  $0.4 \dots 20\text{ մ/վ}$

Միավանքը՝  $\pm (0.2\text{ մ/վ} + \text{չափման արժեքի } 2\%)$

Աշխատանքային

ջերմաստիճան՝  $-10 \dots +50\text{ }^{\circ}\text{C}$

Պահպանման ջերմաստիճան՝

$-20 \dots +70\text{ }^{\circ}\text{C}$

Քաշը՝ 110 գրամ

Չափեր 133 x 46 x 25 (մմ)

